Ա Ռ Ա Ր Կ Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն Ն Ե Ր

ՀՀ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՐԹԻԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2021 ԹՎԱԿԱՆԻ ԱՊՐԻԼԻ 28-Ի ԹԻՎ ԹԻՎ 38-Ա, 39-Ն ԵՎ 40-Ա-42-Ա ՈՐՈՇՈՒՄՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Թիվ 38-Ա որոշման 1-ին և 2-րդ կետերում փոփոխվող իրավական ակտի հերթական համարից հետո գրառված «Ն» տառն անհրաժեշտ էր գրառել մեծատառով:

Թիվ 39-Ն որոշման նախաբանում «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 90-րդ հոդվածի 4-րդ մասին և «Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին» ՀՀ օրենքի 29-րդ հոդվածի 4-րդ մասին հղում կատարելու անհրաժեշտություն չկար, քանի որ համայնքի բյուջեի վարչական մասի պահուստային ֆոնդից ֆինանսական միջոցներ չեն ուղղվել համայնքի բյուջեի ֆոնդային մաս:

Թիվ 40-Ա որոշմամբ փոփոխություն է կատարվել նորմատիվ բնույթ կրող իրավական ակտում: Համաձայն «Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 34-րդ հոդվածի 2-րդ մասի՝ նորմատիվ իրավական ակտում փոփոխություն կամ լրացում կարող է կատարվել միայն նույն տեսակի և բնույթի նորմատիվ իրավական ակտով: Որոշման վերնագիրը ճիշտ չի գրառված: Վերնագրում «որոշման» բառից հետո պետք է գրառվեր «մեջ փոփոխություն և լրացում կատարելու մասին» բառերը:

Որոշման 1-ին կետում չի գրառվել փոփոխվող իրավական ակտի լրիվ անվանումը: Բացի այդ, որոշման 1-ին կետում փոփոխությունը ճիշտ չի կատարվել:

Թիվ 41-Ա որոշման նախաբանում «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի դրույթներին կատարված հղումը թերի է: Համաձայն «Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 17-րդ հոդվածի 6-րդ մասի՝ օրենսդրական ակտերի մասերին հղում կատարելիս նշվում են օրենսդրական ակտի հոդվածի հերթական համարը, իսկ անհրաժեշտության դեպքում՝ նաև հոդվածի մասի համարը, հոդվածի մասի կետի կամ ենթակետի համարը:

Թիվ 42-Ա որոշման նախաբանում «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածին կատարված հղումը սխալ է, քանի որ այն վերաբերում է համայնքի ղեկավարի ընդհանուր լիազորություններին: Անհրաժեշտ է հղում կատարել ՀՀ հողային օրենսգրքի 77-րդ հոդվածի 1-ին մասին:

Կատարող՝ Նաիրա Մարտիրոսյան
17.05.2021թ.